

բայց միտքը յայտնի է, թէ Ս արագզատ յաղթեց Արմաղիական խաղերու մէջ և յաղթողներէն ալ գովութիւն առաւ : Քաղաքաց անուններն ալ հոս չենք ուզեր քննել : — Սեր նպատակէն դուրս ըլլալով կը թողունք յիշելու հոս Ս արագզատայ և Տրդատայ ուրիշ շատ քաջագործութիւններն ալ թէ օտար երկիրներու մէջ և թէ ՚ի Հայաստան : Սեր ազգին պատմութեան մէջ կան շատ քաջաց ուժի նշանաւոր գործքերու յիշատակներ ալ, բայց ասոնց նման կամ աւելի՛ իրենցմէ առաջ Ս ասագնէն զատ կը յիշուի միայն Տորք Հայկազունը որ Մագեղ տան նահապետ եղաւ, Քրիստոսէ իբր 150 տարի առաջ՝ Ս արարչակայ ատենը, որ է ՃԾԵ Արմ պիտադը . արդ մեր Աստեբեայ թարգմանութեան մէջ չեմ գիտեր դիպուածով թէ դիտմամբ՝ ՃԾԵ Արմպիադին՝ Շրջանակաւ խաղին մէջ յաղթող Արդոփոնացի մանկան անունը Սոսկոս դնելու տեղ՝ ինչպէս որ յունարէնը կ'ըսէ Սոսխոս՝ Հայերէնը դրած է Տորքոս . Ժամանակն ալ յարմար կու գայ Տորքայ մանկութեանը :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՒԵՍՏ ԵՒ ՃԱՏԱՌՈՒԹԻՒՆ

ԼԵՂ :

ԼՍԵՂԻՆ պէս ամենահարկաւոր գործոյ մը սկիզբը պէտք է որ շատ հին ըլլայ և գրեթէ մարդկութեան հասակակից : Ս անն զի խորին հնութեան մէջ արեւելեայց, Ազիպտացոց և Հնդկաց ծանօթ էր այս գործիս, և Տաճկաց արանդութիւն մը կ'ըսէ թէ ասեղը Անուք հնարեց . միայն հնոց գործածած ասեղները հիմակուաններուն պէս կատարեալ չեն եղեր, այլ երկաթի մը կտորուանք էին :

Ար կարծուի թէ նորոց մէջ ասեղ շինելու ճարտարութիւնը առաջին անգամ Ապանիացիք սկսեր են, վասն զի

ասկէ քանի մը հարիւր տարի առաջ վաճառականութեան մէջ եղած ասեղները իրենց անուամբը կը կոչուէին : Հիմայ մեծ յարգ ունին Մագղիոյ ասեղները, ուր մեծ հոգ կը տարուի այս ձեւագործիս, և գլխաւորապէս կը շինուին Հատըրսէյձ՝ Տերպի կոմսութեան մէջ, Աւորուի՝ Աիրմինկէմին և շրջակայիցը մէջ, և Սէտտի՝ Աւորչէսդըրի կոմսութեան մէջ :

Այս կերպով կը շինուի ասեղը : Ինչ հաստութեամբ որ ասեղը կ'ուզեն՝ նոյն հաստութեամբ անուշ պողպատի թելեր կ'առնուն և երկու ասեղի երկայնութեամբ կը կտրատեն, և ամէնը մէկտեղ տրցակ տրցակ կազմելով՝ երկու ծայրերը հինգ բթաչափ տրամագիծ ունեցող երկրթէ մանեակներու մէջ կ'անցընեն : Ատքը այս տրցակները թափծու երկրթէ սեղանի մը վրայ կը դնեն և երկրթէ տափկած գաւազանով մը ձգմելով զանոնք կը դարձընեն, որով պողպատէ թելերը կը շտկուին : Արողը այս կտորներէն տասնըութ կամ ինչուան քանը չորս հատ մէկտեղ առած գայլախազէ պղտի յեսանաքարի մը վրայ չոր չոր երկու ծայրերը կը սրէ : Լսս գործողութեանս բաւական արագաշարժութիւն պէտք է, վասն զի սրողը պիտի նայի որ ամէն կտորուանքն ալ հաւասարապէս դպչին յեսանաքարին :

Լսեղները այսպէս չոր յեսանի վրայ սրուելուն համար է որ ասեղ սրելու առուեստը առողջութեան վնասակար է . վասն զի սրողը շնչելու ատեն օդին հետ մէկտեղ կը շնչէ նաև պողպատի փոշիներն ալ որ գործողութեան ատեն օդուն մէջ կը թռչին : Բայց այս վնասիս դէմն առնելու համար մագնիսոտ մետաղի թելերով շինուած դիմակ հնարուած է որ գործաւորին բերանը կը պաշտպանէ . վասն զի մագնիսը պողպատին փոշիները իրեն քաշելով չթողուր որ օդուն հետ բերանը մտնեն, բայց ասեղ սրողներուն շատը այս դիմակը չեն գործածեր :

Արբոր այս կտորները կը սրուին՝ մէջ տեղէն կը կտրբտեն և մէկը երկու մատին ծայրերով չորս հինգ մը մէկտեղ ա

ուած մէկ գծի վրայ՝ չարուած կողմը սարի մը վրայ ուռով կը տափկեցընէ . այս ծայրիս վրայ ասեղին աչքը կը բացուի : — Ըստ անգամ կը տեսնուի որ ասեղներուն աչքերը տափկած չեն , այլ միայն երկու կողմանէ բարակ խողովակներ ունին : Առջ այս խողովակները խարտոցով կը բանային , հիմայ փոքրիկ մամլոյ մը երկու բարակ ահուաներու մէջ ասեղին ծայրերը սղմելով կը ձևացընեն . և որովհետև ասեղներուն ծայրերը այսպէս սղմելով կը պնդանան՝ անոր համար ծակը բանալէն առաջ նորէն կրակի կը ցուցընեն որ կակրղնան : Ատքէն մէկ հոգի մը կարգաւ ասեղները կապարի կտորի մը վրայ դրած ամենասուր ու բարակ երկաթ մը անոնց տափկած ծայրին դրած՝ ուռով կը զարնէ , և միւս կողմը դարձընելով՝ նոյնպէս կը զարնէ . այսպէս ասեղին աչքը երկու կողմանէ ալ կը ձևանայ , բայց դեռ չբացուիր . ուրիշ մըն ալ ասեղները առաջինէն կ'առնու ու դարձեալ կապարի վրայ դրած սուր ու ամենաբարակ երկաթով մը աչքին մէջի պողպատի կտորը դուրս կը հանէ :

Վեչ ծակուած ասեղները դերձանը կը կտրեն , վասն զի ասոնց ծակին ներսի շրթունքները շատ սուր կ'ըլլան . այս բանիս ճար մը ընելու համար մասնաւոր գործիքով մը ասեղներուն աչքերը կը մաքրեն կամ կը բթացընեն :

Խոշոր ասեղներուն զլուխներն ու խողովակները շինելու համար զատ կերպ կայ : Արկրթէ թէն որ կ'ուզեն խոշոր ասեղ շինել , երկու ծայրէն ալ կը սրեն , ու մէջ տեղէն իրենց խողովակներն ու երկու ծակ կը բանան , և վերջը կէսէն երկու կտորելով զատ զատ ասեղներ կ'ըլլան ու ետքը խարտոցով գլուխները կ'ուղորկեն : Այս գործողութիւնները դեռ երկաթին կակուղ եղած ատենը ընելնուն շատ անգամ կը պատահի որ ասեղները կտր չեն ըլլար , անոր համար ասոնք երկրթէ տախտակի մը վրայ դրած՝ վրայէն ալ ուրիշ երկրթէ տախտակով մը կը սկսին ուժով կտրել :

Այս ամէն գործողութիւններէն ե-

տև հազարաւոր ասեղներ տեսակ մը երկրթէ քուրայի մէջ դրած մոխրով լեցուն՝ գոց փուան մը մէջ կամ վառած ածուխի վրայ կը դնեն . երբոր ասեղները հարկաւոր սեպուած աստիճանի տաքնան՝ մոխրը կը թափեն ու ասեղները պող ջրի մէջ կը ձգեն , այս գործողութենէս կը կախուի ասեղին պնդութիւն ու թուլութիւնը , անոր համար մեծ զգուշութիւն պէտք է :

Ատքը ասեղները ջրէն հանելով ամենատաք երկրթէ տախտակի մը վրայ կը դնեն ու կը սկսին դարձընել ինչուան որ ամէնն ալ մէկ գոյն առնուն . երբոր կամայ կամայ կապուտակ գոյն մը կ'առնուն՝ տախտակին վրայէն ասեղները կը վերցընեն՝ սեպելով թէ պէտք եղած պնդութիւնն առեր են . և թէ որ մէջերնին ծուռ ասեղներ դտնուին՝ սալի մը վրայ դրած ուռով կը շտկեն : Այլ կէ վերջը տասուերկու կամ տասնըհինգ հազար ասեղ խուրձ ըրած՝ անոյշ սապոնի եղով թաթխուած ու վրան զփռնի փոշի ցանած չուխայի մը մէջ քանի մը խուրձ քովէ քով կը շարեն . ասոնց վրայ նորէն զմեռնիտի փոշի ու ձէթ լեցընելով՝ չուխան վրանին կը սլըլեն և կապոց ըրած՝ ծայրերն ու բոլոր երկայնքը չուանով աղէկ մը կը կապկըպեն . և քանի մը այսպիսի կապոց ուղղանկիւն սեղանի մը վրայ դրած վրանին ալ ուրիշ ուղղանկիւն ծանր տախտակ մըն ալ դնելով՝ որ երկու ծայրերը բռնելու տեղ ունի , մէկ կամ երկու գործաւոր այս վրայի ծանրոցը օր ու կէս կամ երկու օր շարունակ կը շարժեն . տակի խուրձերը անդադար կտրելով վրայի ծանրութեամբ՝ ասեղները բոլոր մէկմէկու հետ կը շփուին , և վրանին ցանուած զմեռնիտի փոշուով մէկ զմէկ կը փայլեցընեն : — Ա՛եծ գործարաններու մէջ ասեղ փայլեցընելու այս գործիքները շոգուով կամ ջրի ընթացքով կը շարժին :

Արբոր ասեղները աղէկ մը կը փայլին՝ խուրձերը կը քակեն և ասեղները

1 Գղ. Emeri. ՏՃ. Սըֆուս :

տաք ու սապոնոտ մոխրաջրի մէջ կը ձգեն, որպէս զի ձէթով ու զմեռնիտի փոշւով և փայլելու ատեն իրենցմէ ելած պողպատի մասուկներով վրանին կապած աղտեղութիւնը մաքրուի. ետքը ցորենի թեփով լեցուն քառակուսի ամանի մը մէջ կը դնեն՝ որ հորիզոնական դրքով գաւազանի մը ծայր հաստատուած է, և լծակով մը կը դարձնեն. թեփը շատ հեղ կը փոխեն, և ետքը ասեղները այս խարբալէն հանելով կը սկսին կոտրտածներն ու անկատարները աղէկներէն զատել: Արոնց որ ծայրը կոտրած է՝ գործաւոր մը կ'առնու ու յեսանի վրայ նորէն կը սրէ, ետքը ամէնն ալ եզոտ չուխայով մը սրբելով՝ մէկը աջ ձեռքին ցուցամատին վրայ չուխայէ մատնոց մը կ'անցընէ և քանի մը ասեղ մէկէն առած ծայրերը անոր վրայ կը խոթէ, ասով որոնց որ ծայրը դէպ'ի այն կողմը դարձած է վրան խրուելով մէկայններէն կը զատուին: Այս ամէն բանէն վերջը ասեղները քսանըհինգ քսանըհինգ՝ թղթերու մէջ բաժնելով ծախելու կը հանեն:

Իսկ գնտասեղ շինելուն վրայ Ղազմալիպիս երրորդ տարուան հատորին մէջ խօսուած է, տես հոն՝:

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սրջնառիւծ:

ՍՐՋՄՆԱՌԻԻԾԸ քանի որ միջատի վիճակի մէջ է վեցոտանի որդ մ'է, նեպուկի՝ չափ, մթնկէկ աղտոտ դոյն մը ունի սև կէտերով խայտաբղէտ: Այլու իր տափակ է, ու ճիշդ խօսելով բերան չունի. ուտելու գործեաց տեղը կը լեցընեն երկու եղջիւրներուն ծայրերը՝ որ ձանկի ձևով են: Այս զէնքը ամենահարկաւոր է իրեն իւր որսը ձեռք բերելու համար. վասն զի մարմնոյն կո-

րութեան պատճառաւ ետ ետ քալելու ստիպուած է որով չկրնար անոր ետևէն հասնիլ: Այս իրեն կարգէ դուրս կազմուածքը որ առջի բերան տեսնողին պակասութիւն մը կ'երևնայ, միջմնառիւծին գլխաւոր յատկութիւններէն մէկն է: Ինչպէս և իրեն ցեղակից կենդանեաց դիւրաշարժութիւնը չունի, բայց իր որսը ձեռքէն չխալըսիր. ճարտարութիւնը և հնարքը իրեն մէկ հատիկ օգնականներն են. իր կերակուրը միշտ անպակաս է:

Սրջմնառիւծը իւր բնակութիւնը դիտելով կ'ընտրէ, աւելի աւազուտ ու չոր տեղուանք կը սիրէ, և ընդհանրապէս ծառի մը արմատ կ'ընտրէ որ խոռոչ կամ կամարածե ծակ ունենայ, կամ թէ արեւու դիմաց հինցած պատի մը տակ: Ղոյնը ձագարի՝ կը նմանի, և այնչափ աւելի խոր կ'ընէ որչափ որ աւելի ուժ ունի, վասն զի պատրաստելու մեծ աշխատանք կ'ուզէ: Ասի շրջանակը կը սկսի գծել. մարմինը ամբողջ հողուն մէջ ծածկուած արօրի պաշտօն կը կատարէ, ու բոլորակաձև կը փորէ գետինը. ետքը ետ ետ քալելով կը ձևացընէ պարուրածե մը որ երթալով կընեղնայ. բոյնը կը ձևանայ, բայց դեռ շէնքը չէ. պէտք է ձագարէն դուրս հանել մէջը դիզուած հողը: Այս համար միջմնառիւծը ամէն մէկ քայլին կանկ կ'առնէ՝ աւազը իր գլուխը բեռնաւորելու համար, զորն որ առջևի թաթերէն մէկովը կ'ընէ. գլխին վրայ բեռնաւորելէն ետև մէկ ցատքելով մը բոլորակէն դուրս կը ձգէ բեռը. բայց այս գործքս մեծ յաջողութիւն կ'ուզէ: Այս որովհետև այս բանը պարունակաձևին ամէն մէկ դարձուածքին վրայ ալ պիտի կրկնուի՝ թաթերը փոփոխակի կը ծառայեցընէ այս աշխատանքին:

Սինչև հոս միջմնառիւծին ճարտարութիւնը քանի մը միջատներուն ունեցածէն աւելի չէ. բայց պարագայ մ'ալ կայ՝ որ այս կենդանոյս բոլոր ճարտարութիւնը կը յայտնէ ու զինքը ճարպիկ

1 Երես 152:

2 Թեպիկ գեօճէի:

1 Գոսնոս: